ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ————————ի 2024 թվականի №--Ն

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի №379-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ եթե բաժանորդը մինչև 2024 թվականի հունիսի 20-ը գրավոր չի դիմում «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ լուծելու իր հետ կնքված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագիրը, և նույն ամսաթվից շարունակում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններից փաստացի օգտվելը, այդ պայմանագիրը համարվում է փոփոխված, իսկ այն բաժանորդի դեպքում, ով հանդիսացել է նախկին ջրամատակարար կազմակերպությունների բաժանորդ, սակայն «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հետ դեռևս չի կնքել համապատասխան պայմանագիր, պայմանագիրը համարվում է կնքված սույն որոշման 1-ին կետով սահմանված՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի

մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևին համապատասխան:

3. Հանձնարարել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ մինչև 2024 թվականի հունիսի 14-ը հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով առնվազն 10-ական անգամ՝ 18:00-20:00-ն և 20:00-23:00-ն ընկած ժամանակահատվածներում, azdarar.am կայքով, ընկերության պաշտոնական կայքով, սպասարկման գրասենյակներում և փոստային բաժանմունքներում ապահովել սույն որոշման 1-ին կետով սահմանված պայմանագրի օրինակելի ձևի և դրան համապատասխան պայմանագրերի կնքման և փոփոխման՝ սույն որոշման 2-րդ կետով ամրագրված կարգավորման մասին բաժանորդների իրազեկումը:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը սահմանելու մասին» №379-Ն որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունիսի 20-ից, իսկ դրա 2-րդ և 3-րդ կետերը՝ 2024 թվականի հունիսի 7-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ————————ի 2024թ.